# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

23 հունվարի 2013թ. թիվ 18

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով՝

Կ ա ր գ ա դ րու մ եմ.

1. Լոռու մարզում 2012-2013 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել կազմկոմիտե՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ստեղծել մարզային առարկայական հանձնաժողովներ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ Է.Մացակյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հունվարի 23
ք.Վանաձոր